Համբարձման անուշ գիշեր է

1. Սարի գլխին ամպը ցոլաց,
   Համբարձման անուշ գիշեր է,
   Վարդի թփին ցողը մնաց,
   Իմ յարի նխշուն թշերը:

կրկնակ. - Համբարձման անուշ գիշեր է,
Իմ յարի նխշուն թշերը,
Իմ յարի նխշուն թշերը,
Համբարձման անուշ գիշերը:

2. Երգդ երգե հոտաղ տղա,
   Համբարձման անուշ գիշեր է,
   Պար եմ բռնե, հետս խաղա,
   Իմ յարի նխշուն թշերը:

3. Մեր սարերի սիրուն ծաղիկ,
   Համբարձման անուշ գիշեր է,
   Սիրտս մտար հատիկ – հատիկ,
   Իմ յարի նխշուն թշերը:

4. Վանքի ձորում ծաղիկ շատ կա,
   Համբարձման անուշ գիշեր է,
   Հորոտ – մորոտ, նարգիզ, լալա,
   Իմ յարի նխշուն թշերը: